# ԱԶԳԱՅԻՆ

*Թիֆլիզու Հայուհեաց բարեգործական ընկերութեան 1884 թ. Մարտի 4-ն ընդհանուր ժողովի օրագրից քաղուածք.*

Ընդհանուր ժողովը կայացաւ նախագահութեամբ՝ տեղւոյս առաջնորդ Սրբազան Արիստակէս Եպիսկոպոսի յանձնարարութեամբ Արժ. Ցարութիւն Աւագ քահանայ Սուղանաձեանի և ներկայութեամբ ընկերութեան 32 անդամների.

Ընկերութեան կանոնադրութեան 16 յօդուածի գ. կէտի և 29 յօդուածի զօրութեամբ վարչութիւնը ներկայացրեց ընդհանուր ժողովին ի քննութիւն և ի հաստատութիւն իւր գործունէութեան և եւ և մօից անցեալ տարուայ հաշիւը և 1884 թ. համար կազմած նախահաշիւը. Վարչութեան Ատենապետուհին, Տիկին Սրբուհի Երիցեանի կարդացած տեղեկագրից ընդհանուր ժողովը իմացաւ, որ վարչութիւնը՝ տեղւոյս Սրբազան Առաջնորդի հրամանաւ և օրհնութեամբ, պահում է ընկերութեան միջոցներով Ս. Նշան եկեղեցւոյ անուամբ բացուած մի օրիորդական դպրոց, ուր բաց ի այլ առարկաներից, առանձին ուշադրութիւն է դարձուած կարի, ձևի և այլ տնային գիտելիքների վերայ. Դպրոցի մէջ այժմ ուսանում են 20 աշակերտուհի, որոնք չքաւոր դասակարգի ծնողաց զաւակներ են. Առաջիկայ ուսումնական տարուց, այսինքն Սեպտեմբերից վարչութիւնը մտադրել է ընդարձակել դպրոցը, ընդունելով նորա մէջ էլի 20 աշակերտուհի և առանձին ուշադրութիւն դարձնել տեղական աւելի կարևոր համարուած ձեռագործների վերայ. Բաց յայսմանէ վարչութիւնը չէ զլացել միանուագ օժանդակութիւններով օգնելու և այլ Հայոց ծխական դպրոցներին և սոյն տարի նորանից օգնութիւն ստացած են Ջրկինեանց եկեղեցւոյ ուսումնարանը, Հաւլաբարու Ս. Մարիամեան ուսումնարանը և Ցխինվալու օրիորդական դպրոցը.

Յիշեալ Տեղեկագրի մէջ առանձին ուշադրութիւն էր դարձրած այն հանգամանքի վերայ, որ Թիֆլիսի Հայ կանանց հասարակութիւնը, չընայելով վարչութեան գործ դրած ջանքերին, մինչև ցարդ իւր համակրութիւնը զգալի կերպով չէր ցոյց տուել ընկերութեանը, օրինակ 1882 թ. նա ունէր 137 անդամ. իսկ 1883 թ. այդ թիւը իջաւ 99ի.

Այս տեղեկագրից յետոյ կարդացուեց 1883 թ. հաշիւը, որից երևեցաւ, որ յընթացս տարւոյս մուտք է եղել 2971 ռ. 23 կ. հետևեալ կերպիւ. 500 ռ. մշտական ադամներից, 594 ռ. իսկական անդամներից, 1705 ռ. 7 կ. նուագահանդիսից և պարահանդիսից, 64 ռ. նուիրաբերութիւններ այլ և այլ անձինքներից. 299 ռ. 96 կ. ընկերութեան գումարի տոկոսներից և 8 ռ. 20 կ. Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցի աշակեր-

տուհիների ձեռագործի վաճառմանից։ Սոյն ժամանակամիջոցում ծախս է եղել 1274 ռ· 23 կ· հետեւեալ կերպով· — Սուրբ Նշան եկեղեցւոյ դպրոցի վերայ 1025 ռ· 69 կ· (վեց ամսուայ ընթացքում) 200 ռ· միանուագ օժանդակութիւն այլ և այլ դպրոցներին և 48 ռ· 60 կ· դիւանական և մանր ծախսերի վերայ, ընկերութիւնը ց1 Մարտի 1884 թ· ունի 4800 ռ· արժողութեան տոկոսաբեր թղթեր և 2785 ռ· 90 կ· զուտ դրամ։ Ընդհանուր ժողովը այս հաշիւը միաձայն հաւանութեամբ հաստատեց։

Այնուհետեւ կարդացուեց 1884 թ· նախահաշիւը, որի մէջ նշանակուած էր մուտք 3837 ռ· հետեւեալ կերպիւ· 500 ռ· հինգ մշտական անդամներից, 822 ռ· 137 իսկական անդամներից· 2000 ռ պարահանդիսից և այլն· 50 ռ· նուիրաբերութիւններից· 365 ռ· ընկերութեան գումարի տոկոսներից և 100 ռ· Սուրբ Նշան եկեղեցւոյ, յօգուտ դըպրոցի յատկացրած նպաստից։ Ծախսը որոշուած էր 2350 ռ· հետեւեալ կերպով· — Ս· Նշան եկեղեցւոյ դպրոցի վերայ 2000 ռ· այլ և այլ դպրոցների միանուագ օժանդակութեան համար 300 ռ· դիւանական և մանր ծախսերի համար 50 ռ· սոյն նախահաշիւը նոյնպէս ընդհանուր ժողովը քննելուց յետոյ հաստատեց և առաջարկեց վարչութեան ի գործադրութիւն։

Ընդհանուր ժողովը լիազօր իրաւունք տուեց վարչութեան բանկի ընթացիկ հաշւով պահած գումարից 2000 ռ· գործ դնել Ս· Նշան եկեղեցւոյ գաւթում կառուցանելի դպրոցի վերայ, առիթ առնելով այն հանգամանքը, որ դպրոցը այժմ զետեղուած լինելով մասնաւոր անձանց տանը, ենթարկուած է զանազան անյարմարութեանց և մանաւանդ այն որ ծխական դպրոցը անշուշտ պէտք է գտնուի եկեղեցւոյ գաւթում և հեռու մասնաւոր տներից։

## ՄՇՏԱԿԱՆ ԱՆԴԱՄՔ.

1 Ադամեան Թամարա·
2 Ալիխանեան Կատարինէ·
3 Աղաբեգեան Մարիամ·
4 Արղութեան Կատարինէ·
5 Աքիմեան Վառվ· (Մոսկվ)·
6 Բէհբութեան Վարվարէ·
7 Էմինեան Նատալիա·
8 Ենակոլոփեան Նատալիա·
9 Թայիրեան Կատարինէ·
10 Թայիրեան Հռիփսիմէ (Կոյս)·
11 Լէոնոզեան (Մոսկվայից)
12 Ծովիանեան Մայիա
13 Մանթաշեան Դարիա·
14 Մելիքեան Աննա·
15 Նազիրեան Կատարինէ·
16 Նազարբէգեան Մինա·
17 Չիթախեան Մարիամ·
18 Ջանումեան Մինա (Մոսկվ·)

—

## ԻՍԿԱԿԱՆ ԱՆԴԱՄՔ

1 Արխողոմեան Նունէ·
2 Արովեան Շուշան·
3 Ադամեան Քալիա·
4 Ալիխանեան Նադեժդա (Կանդիտատ)
5 Ալխազեան Կատարինէ·

6 Ախնազարեան Մարթայ.
7 Ախվերդեան Աննա.
8 Ախվերդեան Մանիայ (վարչ.
9 Ախվերդեան Եւգինէ. անդ.)
10 Ախվերդեան Հռիփսիմէ.
11 Ամատունի Հեղինէ
12 Ամբարդանեան Վառվարէ.
13 Ասլանեան Կատարինէ.
14 Բարայեան Սօֆիա.
15 Բաինդուրեան Աննա.
16 Բէհբութեան Կատարինէ (կանդիտատ)
17 Բէհբութեան Նատալիա.
18 Բորիսեան Մարիամ.
19 Գրիգորեան Սոֆիա.
20 Դաւթեան Մարիամ.
21 Դէմուրեան Եղիսաբէթ.
22 Եղիազարեան Եփեմիա.
23 Երիցեան Սրբուհի. (վարչութ. Ատեն.)
24 Եւանգուլեան Կատ. (վարչութ. անդամ.)
25 Զոհրաբեան Վառվարէ.
26 Էլիմիրզեան Սալոմէ.
27 Էնակոլոփեան Եղիսաբէթ.
28 Էնակոլոփեան Մարիամ.
29 Էմինեան Սրբուհի.
30 Թամամշեան Նունէ.
31 Թամամշեան Սօֆիա.
32 Թամամշեան Վառվարէ.
33 Թամամշեան Լիդիա. (վարչ. անդամ.)
34 Իզմայելեան Աննա.
35 Իզմիրեան Սօֆիա.
36 Իզմիրեան Սօֆիա.
37 Իստամանեան Կատարինէ.
38 Խանկալամեան Եղիսաբէթ.
39 Խատիսեան Մարիամ. (վարչ. փոխ. Ատենապ.)
40 Խիթարեան Սալոմէ.
41 Խոսրովեան Մարիամ.. (վարչ. անդամ)
42 Խոսրովեան Նունէ
43 Խուդադեան Վարդուհի.
44 Ծովիանեան Մարիամ.
45 Ծովիանեան Կատարինէ.
46 Ծովիանեան Մարիամ.
47 Ծովիանեան Մարիամ.
48 Ծովիանեան Սօֆիա.
49 Ծուրինեան Աննա.
50 Կամսարական Աննա.
51 Կուսիկեան Մարիամ.
52 Հէջուբեան Մարիամ.
53 Ղամբ. Նունէ. (վարչ. անդամ.)
54 Ղամբարեան Նունէ.
55 Ղօրղանեան Նունէ.
56 Ղօրղանեան Սօֆիա.
57 Ղօրղանեան Վառվարէ.
58 Մակարեան Մարիամ.
59 Մամիկոնեան Աննա.
60 Մասումեան Տիկին.
61 Մարգարեան Սալօմէ.
62 Մարգարեան Մարիամ.
63 Մելիքեան Մարիամ.
64 Միրզայեան Թելիկ.
65 Միրիմանեան Մարիամ.
66 Մելիք Ազարեան Թագուհի.
67 Մելիք Բէգլարեան Նունէ.
68 Մելիք Գարագօզ. Կատարինէ.
69 Մելիք Փաշայեան Նատալիա.
70 Մութաֆեան Մանեա.
71 Մութաֆեան Շուշանիկ
72 Յովհաննիսեան Դարիա.
73 Ներսէսեան Սալոմէ (Մոսկվ.)
74 Նուրեան Նունէ.
75 Շադինեան Մարիամ.
76 Շահրիրէգեան Աննա.
77 Պսարեան Սօֆիա.
78 Ռոտինեան Կատարինէ.
79 Ռոտինեան Նատալիա.
80 Ռոտինեան Վառվարէ. (կանդիտատ)
81 Սալամբէգեան Նունէ.
82 Սարաջեան Դարիա.
83 Սարգսեան Սալոմէ.
84 Սարուխանեան Եղիսաբէթ.
85 Ստեփանեան Նունէ (Մոսկվայից)
86 Սուսանեան Աննա.
87 Վերմիշեան Նատալիա.
88 Տէր Միքայէլեան Հեղինէ.
89 Տէր Մկրտչեան Կատարինէ.
90 Տէր Յովհաննիսեան Քալիա.
91 Տէր Յովհաննիսեան Նատալիա (կանդ.)
92 Տէր Օհանեան Գինովարէ.
93 Փոնդոյեան Կատարինէ.
94 Փրիգոնեան Մարիամ.
95 Քալանթարեան Գայիանէ. (կանդիտատ.)
96 Քալանթարեան Սօֆիա.
97 Քանանեան Նունէ.
98 Քիշմիշեան Թամարա.
99 Օրբելի Կատարինէ (կանդիտատ)
100 Օրբելի Վարդուհի.
101 Օսէփեան Նունէ.

—

## ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԵԼ ԵՒ ՄՏԻՑ ՀԱՇԻՒ

*Սկսեալ Մարտի 13-ից 1883 Թ. ց1-ն Մարտի 1884 Թ.*

| ՄՈՒՏՔ. | Առանձին. Ռ. | Առանձին. Կ. | Ընդամենը. Ռ. | Ընդամենը. Կ. |
|---|---|---|---|---|
| ա) Անցեալ տարուանից մնացածը։ | | | | |
| I Առևտրական բանկում ընթացիկ հաշիւ . . | 3691 | 39 | | |
| Առ ձեռն գումար . . . . . . | 24 | 42 | 3715 | 81 |
| II Տոկոսաբեր թղթերը։ | | | | |
| Արևելեան փոխարինութեան տոմսակները իսկական գնով 1500 . . . . . . | 1322 | 71 | | |
| Մի տոմսակ առաջին ներքին փոխառութեան . | 100 | « | 1422 | 71 |
| բ) Նուիրաբերութիւններ։ | | | | |
| Օր. Վ. Զոհրաբեանց . . . . . | 25 | « | | |
| Պ. Ն. Գուրգենեանց . . . . . | 20 | « | | |
| Պ. Ա. Մեղուինեանց . . . . . | 10 | « | | |
| Պ. Վ. Սուլթանեանց . . . . . | 5 | « | | |
| Տ. Մ. Ախնազարեանց . . . . . | 4 | « | 64 | « |
| գ) Անդամակցական վճարներ։ | | | | |
| Տարեկան (99 անդամ.) . . . . | 594 | | | |
| Մշտական (5 անդամ.) . . . . | 500 | | 1094 | « |
| դ) Պարահանդէսներից, կոնցերտներից և այլն։ | | | | |
| Կոնցերտից . . . . . . | 714 | 17 | | |
| Պարահանդէսից . . . . . . | 790 | 90 | 1505 | 7 |
| ե) Տոկոսիք ընկերութեան գումարից։ | | | | |
| Ընթացիկ հաշուից . . . . . . | 154 | 46 | | |
| Կտրօններից . . . . . . | 145 | 50 | 299 | 96 |
| զ) Ուսումնարանի արդիւնք։ | | | | |
| Ձեռագործից . . . . . . . | 8 | 20 | 8 | 20 |
| Ընդամենը . . | | | 8109 | 75 |

*Բացի սորանից ընկերութիւնը ունի վիճակախաղից մնացած զանազան իրեր և երեք հատ Օսմանեան արծաթեայ դրամ և դպրոցական կահ-կարասիք և այլ իրեղէններ.*

| ԾԱԽՔ. | Առանձին. | | Ընդամենը. | |
|---|---|---|---|---|
| | Ռ. | Կ. | Ռ. | Կ. |
| ա) Ընդհանուր ծախսերը։ | | | | |
| Դիւանական ծախսեր . . . . . . | 12 | 30 | | |
| Մանր ծախսեր, յայտարարութիւններ և այլն . | 36 | 30 | 48 | 60 |
| բ) Նուիրատուութիւնք յօգուտ ուսումնարանների։ | | | | |
| Յօգուտ Ցխինվալի ուսումնարանի . . . | 50 | « | | |
| « Ջրկինեանց եկեղեցւոյ ուսումնարանի . | 100 | « | | |
| « Հաւլաբարի Ս. Մարիամեան ուսումնարանի | 50 | « | 200 | « |
| գ) Սուրբ Նշան եկեղեցւոյ ծխական ուսումնարանի ծախսեր։ | | | | |
| Տան վարձ (8 ամսուան) . . . . | 225 | « | | |
| Կարասիք . . . . . . . . | 281 | 60 | | |
| Վառելափայտ . . . . . . . | 21 | 90 | | |
| Ուսումնական պիտոյք . . . . . | 60 | 54 | | |
| Ձեռագործի նիւթեր. . . . . . | 63 | 60 | | |
| Վարժուհիների ռոճիկ (5 ամիս) . . . | 290 | « | | |
| Աղախնու ռոճիկ . . . . . . | 40 | « | | |
| Մանր ծախսեր . . . . . . | 43 | 5 | 1025 | 69 |
| դ) Տոկոսաբեր թղթեր։ | | | | |
| 4 տոմսակ Թիֆլիզի ազնուական բանկի 3100 ռուբ. գնուած 80 ռ. կուրսով, հաշուելով և կտրօնք . | 2526 | 85 | | |
| Ընդունուած է մի 100 ռուբլիանոց տոմսակ Թիֆլիզի քաղաքային վարկի Ընկերութեան ինչպէս . | 100 | « | 2626 | 85 |
| Գումար . | | | 3901 | 14 |
| Անցեալ տարուայ մնացած տոկոսաբեր թղթերը . | | | 1422 | 71 |
| Ընթացիկ հաշիւ առևտրական բանկում . . | | | 2735 | 20 |
| Առ ձեռն գանձարանում գտնվում է. . . | | | 50 | 70 |
| Ընդամենը . . | | | 8109 | 75 |